ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից իրականացվող «Իրան-Հայաստան 400կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցում» ծրագրի /այսուհետ՝ Ծրագիր/ շրջանակներում Սյունիքի մարզի Մեղրի համայնքի /Վարդանիձոր, Թխկուտ և Այգեձոր բնակավայրեր/ վարչական տարածքում «Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի «Արևիք» ազգային պարկի Բողաքար գետի ձախ ափին հարող 8.4 հա տարածքի անտառապատման նպատակով հանրային քննարկում

ՀՀ Սյունիքի մարզ, գ. Վարդանիձոր *03.06.2024*

2024թվականի հունիսի 3-ին՝ ժամը 17:00-ին, ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Վարդանիձոր բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից իրականացվող «Իրան-Հայաստան 400կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցում» ծրագրի /այսուհետ՝ Ծրագիր/ շրջանակներում Սյունիքի մարզի Մեղրի համայնքի /Վարդանիձոր, Թխկուտ և Այգեձոր բնակավայրեր/ վարչական տարածքում «Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի «Արևիք» ազգային պարկի Բողաքար գետի ձախ ափին հարող 8.4 հա տարածքի անտառապատման նպատակով հանրային քննարկում:

Քննարկումը վարում էր Մեղրի համայնքի ղեկավարի տեղակալ Ա.Անտոնյանը, ներկա էին Վարդանիձոր բնակավայրի վարչական ղեկավար Վ.Գևորգյանը, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Ա.Ղարախանյանը, «Սոլիդ Թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ ծրագրի նախագծող Գ.Ազգալդյանը, «Արևիք» ազգային պարկի տնօրեն Ա.Սամվելյանը, «Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի անտառագետ Ս.Մարկոսյանը և համայնքի բնակիչներ (մասնակիցների ցանկը՝ ստորագրություններով, և տեսաձայնագրությունը կցվում են արձանագրությանը):

Բացման խոսքով հանդես եկավ Մեղրի համայնքի ղեկավարի տեղակալ Ա.Անտոնյանը:

Այնուհետև ներկայացրեց հանրային քննարկումը նախաձեռնող կողմին և խոսքը փոխանցեց Ա.Ղարախանյանին:

Ա. Ղարախանյանը նշեց, որ 2006թ.-ին «Բարձրավոլտ էլեկտրացանցեր»-ի կողմից կնքվել է պայմանագիր՝ Իրան-Հայաստան 400կՎ օդային գծի կառուցման նպատակով: Աշխատանքները սկսվել էին 2016թ.-ին, որի ընթացքում «Արևիք» ազգային պարկի տարածքի 4,2հա անտառային ֆոնդին

վնաս էր հասցվել և Կառավարության որոշմամբ պետք է իրականացվի տարածքի կրկնապատիկի չափով վերականգնում: Անտառվերականգնման համար տարածք է հատկացրել «Արևիք» ազգային պարկը: Կապալառու կազմակերպություն է հանդիսանում «Սոլիդ Թրեյդ» ՍՊԸ-ն, որը պատրաստել է նախագիծ, կատարել տարածքին համապատասխան ուսումնասիրություններ:

«Արևիք» ազգային պարկի կողմից տրամադրված տարածքը նախկինում եղել է գյուղատնտեսական նշանակության վարելահող, այդ պատճառով պլանավորվում է կատարել արժեքավոր ծառերի տնկում, ինչպիսիք են՝ խնձորենի, ընկուզենի, տանձենի և այլն:

Այնուհետև Ա.Ղարախանյանը խոսքը փոխանցեց ծրագրի նախագծող՝ Գ.Ազգալդյանին: Նա հանդես եկավ ողջույնի խոսքով, նշեց, որ նախագծի նպատակն է վերականգնել անտառային տնտեսությանը հասցված վնասները, տարածքը ամբողջապես հանդիսանում է պետական սեփականություն, իսկ մոտակա բնակավայրերն են՝ Վարդանիձորը, Թխկուտը և Այգեձորը : Արևիք ազգային պարկի տարածքում դաշտային հետազոտության ենթակա 8,4հա մակերեսով հողատարածքը ըստ հողատիպի կրազուրկ անտառային դարչնագույն հողեր են: Տեղաբաշխված են ծովի մակերևույթից 1618-ից մինչև 1711մ բարձրության վրա, լանջերի հիմնական կողմնադրությունը՝ արևելյան և հարավ-արևելյան: Տարածքը անտառածածակ չէ և չի մշակվում: Նշված տարածքում հողի նախապատրաստումը իրականացվելու է ինչպես փոսերով՝ ձեռքով, այնպես էլ տեխնիկայով՝ խրամատավորումներով: Որպես գլխավոր ծառատեսակ ընտրվել է ընկուզենին, իսկ որպես ուղեկցող տեսակներ՝ տանձենին, սալորենին, խնձորենին, բալենին, կեռասենին և տխլենին: Նախատեսվում է տնկումներ իրականացնել խառը սխեմայով և ընդհանուր հաշվով կպահանջվի ավելի քան 25200հատ տնկանյութ, որից ընկուզենին՝ 6720, խնձորենին՝ 3360, տանձենին՝ 3360, սալորենին՝ 3360, բալենին՝ 3360, կեռասենին՝ 3360 և տխլենին՝ 1680:

Անտառպահպանության նպատակով նախատեսվում է կառուցել ցանկապատ ավելի քան 4000 գծամետր երկարությամբ, նաև կիրականացվեն դաշտամկների դեմ պայքարի աշխատանքներ: 1հա-ի հաշվով նախատեսվում է օգտագործել 200գ ցինկի ֆոսֆիդ, որը պետք է խառնվի 4կգ գրավչանյութի/ցորեն/ և 0,2լ ձեթի հետ:

Գ.Ազգալդյանը հավելեց հիմնադրման և հաջորդ տարիներին անտառմշակույթներում նախատեսվող աշխատանքները՝

- Հիմնադրման տարում նախատեսվում է իրականացնել ագրոտեխնիկական խնամքի աշխատանքներ 4 անգամ, խոտհունձ 1 անգամ: Եթե անտառմշակույթների հիմնադրումը իրականացվի աշնանը, ապա 4 ագրոտեխնիկական խնամքի և 1 խոտհունձի աշխատանքները կիրականացվեն հաջորդ տարի:

- Երկրորդ տարում՝ 3 ագրոտեխնիկական խնամքի և 1 խոտհունձի աշխատանքներ:
- Երրորդ տարում 2 ագրոտեխնիկական խնամքի և 1 խոտհունձի աշխատանքներ:
- Չորրորդ տարում նախատեսվում է իրականացնել 1 ագրոտեխնիկական խնամքի և 1 խոտհունձի աշխատանքներ:
- Հինգերորդ,վեցերորդ և յոթերորդ տարիներին նախատեսվում է իրականացնել խոտհունձի աշխատանքներ 1 անգամ:

Նախատեսվում է իրականացնել անտառմշակույթների ջրում, որի համար անհրաժեշտ ջուրը նախատեսվում է բերել պոլիէթիլենային խողովակով՝ իրականացնելով ջրառ Բողաքար գետից: Ընդհանուր առմամբ վեգետացիայի ընթացքում կպահանջվի մոտ 32000 մ/3 ջուր:
Ջրումը նախատեսվում է իրականացնել անտառապատման առաջին (տնկման հետ զուգահեռ և պարբերաբար) և հաջորդ տարում նախատեսվող լրացման աշխատանքների արդյունավետությունն ապահովելու համար:
Հիմնադրման հաջորդ տարում նախատեսվում է իրականացնել անտառմշակույթների լրացման աշխատանքներ: Անտառմշակույթների լրացման համար կպահանջվի 6300 հատ տնկանյութ, որից ընկուզենի 1680հատ, խնձորենի 840հատ, տանձենի 840հատ, սալորենի 840հատ, բալենի 840հատ, կեռասենի 840հատ, տխլենի 420հատ:
Նախագծի արժեքը կազմում է 71մլն ՀՀ դրամ, նաև կստեղծվեն աշխատատեղեր:

Այնուհետև սկսվեց հարցուպատասխան.

Վարդանիձորի վարչական ղեկավար Վլադիկ Գևորգյանը հետաքրքվեց թե արդյոք նախատեսվում է աշխատավորներին ապահովվել տնակներով:

Հարցին պատասխանեց Ա.Ղարախանյանը, նշելով, որ դժվարանում է պատասխանել հարցին, քանզի կապալառու կազմակերպությունն է զբաղվելու նման հարցերով, միգուցե որոշում կայացվի աշխատավորներին այլ վայրերից հավաքագրել:

Վ.Գևորգյանը հավելեց, որ նման բազմապիսի ծառատեսակները կարելի է փոխարինել ընկուզենիներով և խնձորենիներով:

Գ.Ազգալդյանը նշեց, որ կարևոր է ազգային պարկի տեսակային կազմը համապատասխանի այն վերջնարդյունքին, որը նախատեսվում է վերականգնել: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ յուրաքանչյուր ծառատեսակ կարևոր է, տարածքը միատարր չէ, առկա են 4 տարբեր հողակտորներ, լանջերի կողմնադրությունով պայմանավորված՝ ընտրվել են տարբեր ծառատեսակներ, հողի նմուշարկում է իրականացվել, լաբորատոր հետազոտություններ, միկրոկլիմայով պայմանավորված՝ լավ բերքատվություն ապահովվելու համար:

Քանի որ այլ հարցեր չհնչեցին Ա.Անտոնյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին և նիստը համարեց փակված:

Հանրային քննարկման պատասխանատու՝
Մեղրի համայնքի ղեկավարի տեղակալ՝ Ա.Անտոնյան

Նախաձեռնողի ներկայացուցիչ՝ Ա.Ղարախանյան